

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Մարտի 27-ին ՀՀ Սյունիքի մարզպետի ժամանակավոր պաշտոնակատար, մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 60 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր երեսուներեք, աշխատանքի տեղավորման՝ քսանհինգ, նպաստի վերականգնման և շենքի վթարային վիճակի մասին՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից երեսունին տրվել է դրական լուծում, երեքը՝ մերժվել է:

Աշխատանքի տեղավորման մասին դիմումները վերցվել են հաշվառման և ուսումնասիրվում են դրանց լուծման հնարավորությունները:

Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում ուսումնասիրման ընթացքի մեջ են գտնվում նպաստի վերականգնման և շենքի վթարային վիճակի մասին դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ